

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

V592

СГ926.7.687

Պրոլետարմեր բոլոր յերկրների, միացե՛ք.

ՅԵԼԻՐ ՊԱՅՔԱՐԻ ՍՏՐՈՒԿ ԳԱՂՈՒԹԻ =

(ԽԵՍՑԵՆԻՐՈՎ, Կ. Յ.)

Դրու. փոխադրեց Ա. ԽՈՆԴԿԱՐՑԱՆ

ԵՎՀԱԿԱԿԱՆ
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

374.3
6-42

№

29

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՏԵՐԵՎԱՐԱ

1925

374.3
6-42

N 592

621531

C1926v0681

MAR 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԱԱԿԱՆ
ԹԱՐԱԾՈՒՅԹ
Ակադեմիա
ԽՍՀՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ակադեմիան Խառնության
Համար ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ակադեմիա

«ԿԱՊՈՒՅՏ ԲԼՈՒԶ»

«Կապույտ բլուզի» խմբակը, մի քանի որ մնաց Յերեանում և
կենինականում, մեծ թարմություն առաջացրեց:

Թատրոնները լեփ լեցուն եյին, բոլորը գովում, հիանում եյին:
Ի՞նչ ե «կապույտ բլուզը», ի՞նչու մտքեր հուզեց:

«Կապույտ բլուզ» Մոսկվայի Արհմիությունների նահանգա-
յին խորհրդի կենդանի լրագիրն ե:

Իսկ ի՞նչ ե կենդանի լրագիրը:

Կենդանի լրագիրը մասսանների սիրելին ե: Կենդանի լրագիրը
դանաղանվում է պատի լրագրից նրանով, վոր նրա առաջարանը,
հոդվածները և բոլոր նյութերը թատրոնականացված են, վոր թա-
տրոնական ձևերով (ինսցինիրովկա, արտասանություն, սարզանք,
յերգ, պար և այլն) տալիս ե կյանքի անցուդարձը:

Կենդանի լրագրի եյությունը նրանում ե, վոր նա խաղացվում
է, ապրում:

Կենդանի լրագիրը գրավիչ ե, վորովհետեւ նրա նյութը թարմ
ե, այժմեական, կենդանի, պատկերագրությունը:

Ի՞շպես ե կազմվում կենդանի լրագիրը՝ «կապույտ բլուզ»:
Ակումբի բոլոր խմբակները (գրական, յերգ-յերաժշտական,
ֆիզկուլտի, նկարչական և այլն) նյութ են տալիս կենդանի լրագրին:
Ինչպես պատի լրագրի, նյունպես և կենդանի լրագրի նյութերի
մշակման համար, ընտրվում ե խմբագրական կոլեգիա:

Ի՞նչն ե կազմելու կենդանի լրագրի՝ «կապույտ բլուզի» նյու-
թը:

Կենդանի լրագիրը պիտի լինի տեղական կյանքի ու աշխատան-
քի հայելին: Կենդանի լրագիրը եր բնույթով պիտի նմանվի պատի
լրագրին: Նա պիտի բովանդակի տեղի կյանքն ու աշխատանքը
պատկերող հոդվածներ, ինսցինիրովկաներ, կենցաղային պատկեր-
ներ, ծաղրական շարժեր, վոտանագորներ, առակներ և այլն:

ԿԵՆԳԱՆԻ լրագիրն իր մասսային պիտի տեղյակ պահի նաև
մեր արտաքին ու ներքին կյանքի կարևոր դեպքերին:

Խմբագրական կոլեգիան կենդանի լրագրի նյութերը մշակում
է, հարմարեցնում ե բեմին, թատրոնականացնում ե, իսկ ակումբի
բոլոր խնբակները, հավաքական ույժերով, խաղում են այդ
նյութերը:

Ի՞նչպես ե խաղացվում «կապույտ բլուզը»՝ կենդանի լրագիրը:

Կապույտ բլուզ հագած կոնֆերանսեն հայտարարում ե (հա-
ճախ ըռուղորի միջոցով) լրագրի «համարները» — նյութերը:

Առաջնորդողը, վորեն կարեոր դեպքի պարզ, հակիրճ պատ-
կերն ե: Առաջնորդողից հետո խաղացվում են՝ ինսցենիրովկաներ,
արտասանվում են վոտանավորներ, լինում ե կոլլեկտիվ և անհա-
տական յերգ, պար, մարզանք և այլն:

Ամեն ինչ թատրոնականացված ե, լայն կերպով ոգտագործվում
ե զրիմը, թատրոնական շորերը և այլ հարմարություններ:

Հենց գրա համար ել «կապույտ բլուզը»՝ կենդանի լրագիրը
հետաքրքիր ե, զրավիչ:

«Կապույտ բլուզը»՝ կենդանի լրագիրը — ամենալավ ազիտ-
թատրոնն ե:

Նա չունի հատուկ դերասաններ, նա խաղացվում ե հենց բան-
վորների ուժերով: «Կապույտ բլուզի» սիրող կամ խաղացող լի-
նել, նշանակում ե լինել ամենալավ ազիտատորը, պրոպագանդիս-
տը:

Մեր կուսակցականներն ու կոնսոմոլիստները անպայման պի-
տի լծվեն կենդանի լրագրի ամրապնդման գործին և մեր բոլոր
բանակումբներում ստեղծեն ե դեկավարեն մեր «կապույտ բլուզի»
աշխատանքները:


Մեր բանակումբներին կից յեթե ունենանք մեզ հարազատ
«կապույտ բլուզը» —

— ակումբներից դուրս կը շինական միության արդեն ձանձրալի
«թատրոնչիությունը»:

«Թատրոնչիությանը» կփոխարինե ակումբի բոլոր խմբակ-
ների ուժերի վրա կառուցված կենդանի լրագիրը, մեր «կապույտ
բլուզը»:

Բանակումբներ, ամենալավ լիներ, քաղլուսվար,

Անմիջապես զուգահեռ գործադրություններ:



ՀԽՍՀ Ա. ԽԱՆՈՎԻ ՆԱԽԱՐԱՐ

59955-66

Ակումբներում կազմակերպենք «կապույտ բլուզի» խմբակներ.
Նրանք կենդանություն ու կյանք կտան մեր ակումբներին:

«Կապույտ բլուզի» խմբակներն առաջ կմղեն, կկրթեն, կմար
զեն մեր մասսաների միաբը:

Զեզ ոգնելու համար Հ. Ա. Մ. Խորհրդի կուլտ-բաժինն արդեն
հրատարակել ե մի շարք նյութեր:

Այսպես՝ «Յերեք ինտերնացիոնալ» «Յելիր պայքարի, ստրուկ
գաղութի» գրքույիները, յերկուսն ել կգտնեք «Աշխատանքի» № №
5 և 14, 15-ում «Աշխատանքի» № 3 - 4-ում «Տեղկոմի հալը», և
«Որինակելի տեղկոմ»:

Շուտով լույս կտեսնի նաև մի ժողովածու:

Դեհ, գեղի ստեղծագործական, մասսայական աշխատանք:

Կազմակերպենք մեր «կապույտ բլուզի» խմբակները, նրանք
մեր բանակումբների ամենալավ բարեկամներն են:

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՅԵԼԻՐ ՊԱՅՔԱՐԻ, ՍՏՐՈՒԿ ԳԱՂՈՒԹԻ

(ԻՆՍՅԵՆՆԻՐՈՎՆԵՑ.)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՌՈԼԴՎԻՆ	{ Ա. Եղիաչի վարչապետ	ՀԻ. Ե. ԶԻ
ԶԵՄԲԵՐԼԵՆ	{ Ա. Եղիաչի արտաքին գործերի մինիստր	Ա. ՌՈ. Բ. Հ. ԴԿ. Յ. ՅԻ Ֆ. Ե. Լ. Ս. Պ. Ա. ՐՍԻԿ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԲԵՄԱԴՐՈՂԻՆ

Զինացին, հնդկացին, արաբը, պարսիկը և ֆելլահը կազմում են մի փիղ։ Փիղը ծածկված է գորգով։ Վրան նստած են Բոլղվինն ու Զեմբերլենք։

Դերակատարները պետք է ունենան համապատասխան զգեստ— Բոլղվինն ու Զեմբերլենը անգլիացի լորդի զգեստ,— Փելլահը, չինացին, արաբը, հնդկացին, պարսիկը իրենց ազգային տարազը և կոմինտերնը բանվորական հագուստ։

ԲՈԼԴՎ. — Կարինետը բանվորական տապալեցինք— Փյանյթ,
ընկավ, հենց վոր վճռական զրոհ տվեցինք— հայթ—
և վարչապետ Մակղոնայլդի փոխարքն, տես,
յեկանք Բոլորովին ու Զեմբերլեն, ոլուայթ։

ԶԵՄԲ. — Յեսս, յեսս.

ԲՈԼԴՎ.— Ընտրությունը թղթախաղ ե—զոնե մեզ մոտ, չե,
ով լավ կեղծի՝ նա կշահե—շահելն ամոթ ե։

ԶԵՄԲ. — Ե՛, ինչ ամոթ,
են ել մեզ մոտ.

առանց կեղծման շուրջըդ ինչ կա,—
սիզար, կոնֆետ, սուրճը մոկկա,

Փայլն աչքերի, ծամը կանանց,
թէ շրթունքներն աղջկերանց...

ԲՈԼԴՎ. — Աղջիկ ասիք՝ միտըս բերիք ուրախ մի արար
մեր են խաղից, վոր խաղացինք մենք Ռակովսկու հետ.
դեպ կապիտալ մեր որիորդը սավետի տղան սավետ
սեր ե տածում հանկարծական, սեր՝ մի վարար գետ—
(ձայնը հնչեղ, տեսքը գերող, ինքն ել անարար
մեղք եր միթե, սիրեր նրան ուռար շինարար)
և հարսնախոս ե ուզարկում
միստը Ռակովսկուն.

«Յեկեք, ասում ե, հաշտվենք, կնքենք դաշնագիր.
կապիտալին մեզ հարս տըգմք, կտանք գլխագին
ու հետն ել մեծ կոնցեսիտաներ—ջնջեք պարաքը հին»:

ԶԵՄԲ. — Հորն ովորմի՝ խաբեց, ելի:
Դիտ տաներ մեր կապիտալը
զարգացներ իր ինդուստրիան,
հետո առներ իր գողալը

ԲՈԼԴՎ. — Ու խառներ կաթսան—
հեղափոխության:

ԶԵՄԲ. — Հա, խառներ կաթսան—
հեղափոխության...
ու մեր գետ հաներ մեր բանվորներին,
—մեր գաղութների ստրուկ ու ճորտերին,
մեր գողին նստեր,
մեր մազը փետեր:

ԲՈԼԴՎ. — Բայց տեսաք ի՞նչ թող փչեցինք
աչքին Ռակովսկու.
առաջ նրան ցույց տվեցինք
փայլը մեր վոսկու,
հետո սկսեցինք ժողովախաղ,
հետո ել զույգ—զույգ հայտագրեր,
— չե՞ վոր վաղուց աշխարհը սաղ

ԶԵՄԲ. — Մեկ կողմից «նամակը» Զինովեի,
—պատմությունն այդ մթին խորամանկ, —
վորը մեր կյանքի մեջ մի նոր ձեի

խաղ եր, վոր բանվորին նստեց շատ թանկ:
իսկ մլուս կողմից...

ԲՈԼԴՎ. — Յերեք ամիս քաշըշեցինք
պայմանագրի քննությունն
ու վերջն, ինչպես մի հնություն,
արխիվ գցինք, թաղեցինք.

ԶԵՄԲ. — Պահպանողական
մեր կուսակցության
պատիվը դրանով
հավերժ փրկեցինք:

ԲՈԼԴՎ. — Բայց ելի դեռ շատ կար գործ,
զենք եր առել Յեղիպտոս...
ու տվինք իսկույն այսպիսի հրաման.
«Ի հատուցումն լիստիկի մահվան,—
ինչպես արել ենք ամեն տեղ ու միշտ—
հիմա ել կախել տասնմեկ զաղլուխստ.
և վորպեսզի պատիժն իրոք լինի խիստ թունդ
ու գաղութներն ել միտք չանեն բարձրացնել բունդ
ֆելլահներից պետք ե գանձել հինգ միլիոն ֆունտ:»

ԶԵՄԲ. — Քոսոտ շնից թեկուզ մի մազ—
այդ ել ե բան, լավ իմանաս:

ԲՈԼԴՎ. — Բայց այդ դեռ քիչ ե. մեզ պետք ե բամբակ,
դարձյալ ֆելլահին պետք ե քիչ հուպ տանը.
մենք շատ պետրովի, նավթի ծարավ ենք,
Մոսուլ, Պարսկաստան պետք ե զրավենք:
Մոսուլի համար մենք ունենք իրաք—
ասորին, արաբն՝ յերկուսն ել կրակ.
պարսիկի համար կա շեյխը Խեյզալ,
բավական ե մի հազար վոսկի տալ,
համշարու գլխին նա վայ կըերի,
հիմնիվեր պարսից հողը կավերի:

ԶԵՄԲ. — Սուեզից մինչև Պորտ-Սինգապուր
ճամփա պիտ շինենք—յերկաթուղի,
այստեղ պիտ ստեղծենք մի նոր մեծ Ռուր,
վոր վեր առաքենք նոտը ծխի:

ԲՈԼԴՎ. — Վորպեսզի ահը Հնդկաստան համնի,
ու հանգիստ նստեն ավղան, հնդկացի—

Հինացիներին պետք ե լավ քամենք —
իրար դեմ հանենք, իրար միս ծամեն,

ԶԵՄԲ. Այդ լավ ե, լավ.

մահ տանք մեկին,

մյուսն զգա ցավ,

ահը հասնի յերրորդին:

ՔՈԼԴԿՎ. — Ու ծծենք հյութը հարուստ

հարավի, Արևելքի,

մենք լինենք կուշտ ու տըռուզ,

նրանք մնան սովի ձեռքին:

(Իջնում են փղից, փղի ծածկոցը բարձրանում ե. դուրս են

գալիս Փելահը, պարսիկը, հնդկացին, չինացին, արաբը),

ՔՈԼՈՐԸ ՄԻԱԲԵՐԱՆ. — Կապիտալը Յեվրոպայում մի հսկա սարդ —

հյութն ե ծծում իր ստրուկների, վոր հագենա.

գործարանից սողում — հասնում հանքատեղ, շախտ,

Յեվրոպայից դեպ Արևելք ե սողում նա,

Ստրկացած գաղութների արյունն ե խմում —

ու ձգտում ե բոլորին ել զարկել, հարվածել:

ՖԵԼԱՀ — Աֆրիկայում,

ՊԱՐՍԻԿ — Պարսկաստանում,

ԱՐԱԲ — Միրիա —

ՆԴԿԱՑԻ — Յելլոնում —

ՔՈԼ. ՄԻԱՍԻՆ. — Ամենուրեք իր կեղեքման գահն և հաստատել:

ՖԵԼԱՀ — Յեգիպտացի յեմ — դարավոր ստրուկ,

չարբաշ աշխատող, բայց ում համար. ում,

առաջ փարավոնն եր ծծում զիրուկ,

այժմ ել կապիտալն ե միսս ծամում.

Ուզում եմ յելնեմ, վորպես մի սամում,

փշրեմ ստրկության շղթաներս յերկար,

բայց թույլ ե կամքս, շուտ եմ ընկճվում,

ինգիզի նավ ե աչքիս յերեւմ...

ՊԱՐՍԻԿ — Հեյ գիդի, հին Պարսկաստան,

իմ պերճ յերկիր հայրենի,

այժմ դու լոկ շահաստան

կապիտալի վայրենի:

Քո ուսերին, քո գլխին —

իջնում ե մուրճն անդադար,

կեղեքում ե քո հոգին

տաս պետության կապիտալ:

Միայն յերկիրն ե Սավետի

քեզ բարեկամ ու ոգնող.

ախ, յերը կգա ծով նետի —

ես գալիերին մեղ լափող:

ՉԻՆԱՑԻ — Չունեմ միրուք, չունեմ բեղ,

վրաս չկա ճարպ ու յեղ,

ազգս անթիվ միլիոն գեղ. —

ու տեղս միշտ նեղ ե, նեղ:

Բայց եղ քիչ ե. «Չան-Լի,

առատ կը լինի տունըդ, լի», —

ասել ե լորդն Անգլիայի,

յեկել մտել ե մեր տուն

խլել փակ-բանալի,

խլել գանձ ու գանձատուն,

թողել մեղ բրինձն անլի —

ու վորպես խեղճ կուլի՝

թափառում ենք անտուն:

ՀՆԴԿԱՑԻ — Յես հնդկացի ռայաթ,

զենքն ու զուրը ատող,

միսն ու յուղս առատ,

բայց ինգիզն ե ուտող.

որն եմ անիծում իմ,

են որը, յերը անգլիացին

տեր գառավ իմ յերկրին,

ինձ դարձրեց իր գերին:

Բարն իմ տեղը կճաքել,

փայտը կապստամբեր,

ենքան եմ վիզ ճկել,

չեմ կարըմ նայել վեր:

ԱՐԱԲ — Քաղաքներս բողբոշ —

Դամասկ, Մեքքա, Մեղրի —

իմ յերկիրը ամբողջ

փրանկն ու անգլիացին

զոռով աիրել նստել
 յես զեռ վողջ ու առողջ
 քաշ են տալիս իմ դիմ:
 Բեղվինին դրուզի դեմ,
 դրուզին վահարիթի,
 իրար դեմ են հանում,
 վորպես անմիտ իթի:
ԿՈՄԻՆՏԵՐՆ — Մի թողնեք, վոր ձեզ ճնշեն.
 ձեր ձայները զիլ, հնչեղ՝
 թող հասնեն ամեն տեղ,
 թող ամենքին կանչեն.
 ով մշակ ե, բանվոր,
 ով գեղջուկ ե, աղքատ,
 մրճակիր, քլունգավոր,
 բահ, մանգաղ ու ցաքատ
 բանեցնողներ բոլոր—
 զեպի կոփմս ահավոր,
 կոփը վերջին, արդար—
 ընդդեմ կապիտալի
 յելեք Ռոման, Զան—լի:
ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ԽՈՒՄԲ — Յերբ գու յես կանչում մեզ—
 ծլում ե մեր բանակը,
 ուժ ե առնում, զգում, վոր
 մերն ե հաղթանակը:
ԿՈՄԻՆՏ. — Այն, ձերն ե, պատրաստ
 և զեպի կոմինտերն:
ԲՈԼՈՐ ՍՏՐՈՒԿ. — Պատրաստ, առմիջու պատրաստ,—
 գու յես մեր հերն ու մեր:
ԿՈՄԻՆՏ. — Թշնամու հարվածին
 տանը հարված առնացի —
 պարսիկ, չին ու արաբ,
 ֆելահ, ուփ, հնդկացի:
ԲՈԼԴՎ. { միասին. — Յելավ ոփը անմեղ,
 յելավ չինը անբեղ
 յելավ խենթ-խելահեղ
 արաբը — մի կրակ.
 ֆելահն ե յելսում,

ծույլ պարսիկը նկում
 ու հետն ել հնդկացին
 իր ատամն ե սրում.
 եյ, բեր գնդացիր...
 Տըաք տրա ըա ըաք...
 Տաք — տաք...
 (կրակում են ու փախչում)
ԱՐԱԲ. — (վիրավոր) Մեզ սավետն ե տալիս տոն,
 պետք ե ցմահ պալքարել:
ԲՈԼՈՐԸ. — Կարմիր դաւնա պիտ լոնդոն
 ու ազատվին վողջ ստրուկներ:
ԿՈՄԻՆՏ. — Վերջին վասնզի ժամն ե հասել
 կապիտալի աշխարհի,
 արյունն արդեն սկսում ե հսսել —
 բանվոր, ուժերդ լարիր:
ՄԻ ՍՏՐՈՒԿ. — Սաման ե ծնվել
 մեր ծոցից, տես.
 թշնամու յերախն
 արավ յերկու կես:
Հ. ՐԴ ՍՏՐՈՒԿ. — Մենք բյուր միլիոն ենք
 և մի միություն.
ԲՈԼՈՐԸ. — Ու պետք ե հիմնենք
 մեր իշխանություն:
Յ. ՐԴ ՍՏՐՈՒԿ. — Ել վիզ չենք ճկի
 թշնամու դեմ:
ԲՈԼՈՐԸ. — Ել, բանվոր, յելիր,
 ի զեն, ի զեն:
 (Խմբվում յերգում են Արևելյան ինտերնացիոնալ
 «Կոմունիստական ինտերնացիոնալի» յեղանակով):
 «Յելիր պայքարի, ստրուկ գաղութի,
 զողիր ցեղերդ մեկ մեկու,
 հասել ե ժամը — պետք ե պայթի
 վերջին մարտը ահարկու:
 Թող գողգողան, վըլչեն գահերը
 կապիտալի յերկըներում,
 զենքի վերածենք մեր բահերը

Թող հուր յեռա մեր սըտերում:
 ԶԵ հիմա ունենք մենք դեկավար,
 հանձինս անհաղթ կոմիստերնի.
 Խմբենք գնդեր հազար-հազար—
 հին աշխարհը պիտ մեռնի,
 ու մի նոր աշխարհ պետք ե ծնվի:
 Կորչեն կեղեքում, հալածանք—
 մեզնից մի ընտանիք պիտի կազմվի,
 մեր միակ իշխողն—աշխատանք:
 Դե, յելիր, քանի ուշ չե, ֆելլահ,
 ալ նժույգդ—հեծիր, ժիր արար,
 պարսիկ, թոթափիր քունըդ անշահ
 յել հնդկացի, չին—վողջ հարավ:
 Թող դողդողան, փըլչեն գահերը
 կապիտալի յերկըներում,
 զենքի վերածենք մեր բահերը,
 Թող հուր յեռա մեր սըտերում:

(Վ.ԱՐՅՈՒՀՈՒՑԻ)



14840-53

309

53.105

574, 3

5-42

ԳԻՆԵ Ե 10 ԿՈՐԵԿ

բարս Ձ

դյուլ շաքար

ԱՓ 1
ՎՐԼԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒԹԵԱ
ԲԱՏՈՒԽԱԼԱՆԻ
Ակադեմիա Նառք
ՀՀ

ԳԻՆԵ Ե ՅԵՐԵՎԱՆ, ՀՅՈՒԽ-Ի ԿՈՎԵ-ԲԱԺԻՑ

305